Հաստատում եմ՝

Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի տնօրեն՝

_____ Պ. Սանթրոսյան

« 05 » 03 2011թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի (այսուհետ՝Քոլեջ) Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒԽ) Քոլեջի ուսանողության ներկայացուցչական, ինքնավարության, ինքնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող ներկայացուցչական ընտրովի մարմինն է:

1.2. ՈՒԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն է:

1.3. ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է սովորողների շահերը, նպաստում նրանց կրթական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.4. ՈՒԽ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ գործող օրենսդրությամբ՝ հաստատության և իր կանոնադրություններով:

1.5. ՈՒԽ-ն կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ, որոնց վրա ՈՒԽ-ի հայերեն անվանումը պարտադիր է:

1.6. ՈՒԽ-ի լրիվ անվանումն է՝ Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի Ուսանողական Խորհուրդ:

1.7. ՈՒԽ-ի հասցեն է՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/1, Տարածաշրջանային N1 պետական քոլեջ:

2. Նպատակները եվ գործունեության հիմնական ուղղությունները

2.1. ՈՒԽ-ի նպատակն է՝

ա) ապահովել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարմանը,

բ) Քոլեջի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,

գ) մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

դ) պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,

ե) միավորել Քոլեջի ուսանողության ջանքերն ուղղված ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորման նպաստմանն ու կրթական, հոգևոր, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացման ապահովմանը,

զ) կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, աջակցել նրանց սոցիալական վիճակի բարելավմանը,

է) մասնակցել Քոլեջի տարածքում ներքին կարգապահության պահպանմանը:

2.2. ՈւԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից ու խնդիրներից: Այն համագործակցում է ՀՀ-ում գործող ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ:

3. ՈւԽ-ի անդամների իրավունքները և պարտականությունները

3.1. ՈւԽ-ի անդամներն իրավունք ունեն.

ա) մասնակցել Քոլեջի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին՝ ուսանողներին վերաբերող ուսուցման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, նրանց հետ տարվող լրացուցիչ աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին,

բ) ներկայացնել կարծիք հաստատության մանկավարժական խորհրդին՝ սովորողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ. առանձին դեպքերում հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար,

գ) ստեղծել ուսանողական տարբեր ակումբներ և աջակցել դրանց աշխատանքների կազմակերպմանը,

դ) արձագանքել և իր իրավասությունների սահմաններում ընթացք տալ սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին,

ե) իրականացնել աշխատանքներ սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ,

զ) աջակցել կառավարման խորհրդի, տնօրինական խորհրդի, մանկավարժական խորհրդի և տնօրինության կողմից ուսանողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը,

է) մասնակցել համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը,

ը) իրականացնել Քոլեջի և սույն կանոնադրությունից, ինչպես նաև Քոլեջի ուսանողների հիմնական պարտավորություններից և իրավունքներից բխող այլ լիազորություններ:

թ) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ՈւԽ-ի աշխատանքների վերաբերյալ

զ) ընտրել ՈւԽ-ի նախագահ իրենց կազմից,

է) համալրել ՈւԽ-ի կազմը՝ ուսանողության շարքերից առաջադրելով նոր թեկնածուներ:

3.2. ՈւԽ-ի անդամները պարտավոր են.

ա) օժանդակել ՈւԽ-ի հեղինակության ամրապնդմանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը,

բ) ակտիվ մասնակցություն ցուցաբերել ՈւԽ-ի կողմից անցկացվող միջոցառումների ծրագրերի մշակմանը և դրանց իրականացմանը,

գ) բարեխղճորեն կատարել ստանձնած պարտականությունները,

դ) խուսափել գործողություններից, որոնք կարող են վնասել ՈւԽ-ի կամ նրա անդամների հեղինակությանը,

ե) հետևել սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականությունների կատարմանը,

3.3. ՈւԽ անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքերում.

ա) ՈւԽ-ի որոշմամբ՝ ժողովներից պարբերաբար բացակայելու, աշխատանքից խուսափելու, որոշումները չկատարելու, կարգապահական խախտումների և

Քոլեջի կանոնադրությամբ սահմանված՝ ուսանողի պարտականությունները չկատարելու դեպքերում:

բ) ուսումնառությունն ավարտելուց հետո,

գ) Քոլեջից հեռացվելու կամ ինքնակամ հեռանալու դեպքում,

դ) անձնական դիմումի համաձայն:

3.4. ՈւԽ-ի անդամի լիազորությունների դադարեցման մասին որոշումը ընդունում է ՈւԽ-ը: